ՀԱՅԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հիսուսյան

ՀԱՅԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

15418

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

АР 2
Կ=53

Տարիներ առաջ, երբ Անահիտ Կիրակոսյանը դեռևս թովուն ուսանողուհի էր, դառը ճակատագրի բերումով գամվեց անկողնուն:

Նրա այս՝ առաջին ժողովածուն ողողված է պայծառ թախիծով, հույսով ու հավատով դեպի կյանքն ու մարդը, դեպի սիրելի հայրենիքը: Այն միաժամանակ մարդկային կամքի հաղթանակն է դժվարությունների ու անհուսության դեմ:

Կ $\frac{70304\ (508)}{705\ (01)\ 78}$ 78 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն,

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Օրորվում է մեղմ ու անդորր
Կոմիտասյան երգը կուլալ,
Մերթ լցվում է հույսով մի խոր,
Մերթ ուզում է տխրել ու լալ:

Ախ, ինչե՞ր կան նրա երգում.
Եվ ծով կարոտ, և խոհ աննինջ...
Մաճկալն ահա հողն է հերկում,
Խաբրիկ ուզում կռունկներից:

Միջով պայծառ երապանքի
Նրա լույսն է հոսում թովիչ...
Մերթ ողողանջ է դառնում կանգի,
Մերթ հեռավոր ցավ ու թախիծ:

Երգն է փարվում առավոտին,
Գիշերում է նա վառվռում,
Հին դարերի խորքից մթին
Դեպի նորերն է երկարում:

Հին տրտունջ է բերում իր հետ,
Մեր սրտի մեջ հնով հառնում,

Օրերում այս երանավետ
Նոր կարոտ է երգը դառնում:

Դեռ շատ պիտի նա խորանա,
Արմատ նետի մեր սրտի մեջ,
Պիտի վառվի ու նորանա,
Հառնի գալիք դարերում պերճ: